

ՏԵՐՈՒՆԻ**ՀԱՆԳԻՍ**

**Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍՈԿՈՊՈՍ ԹՕՓԱԼԵԱՆԻ
(1940-2023)**

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը վիշտն ունեցաւ կորսնցնելու իր երեցագոյն Միաբաններէն՝ Տ. Վահան Արք. Թօփալեանը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 10 Յունուար, 2023-ին, Ամմանի մէջ (Յորդանան), 83 տարեկան հասակին:

Հանգուցեալը՝ աւագանի անունով Հայրապետ, ծնած է 15 Մարտ, 1940-ին Լիբանան: Նախնական կրթութիւնը ստացած է Լիբանանի Լուսինեան Ազգային վարժարանին մէջ, ապա 1953-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարան եւ Ընծայարան:

1961-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի ձեռնադրուած է սարկաւագ:

1963-ին ձեռամբ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Վահան Աբեղայ:

1963-1966 թթ. ուսուցչութիւն ըրած է Ժառանգաւորաց վարժարանէն ներս:

1966-ին Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ձեռամբ ստացած է վարդապետական չորս աստիճաններ:

1966-1973 թթ. ծառայած է Ֆրանսայի տարբեր քաղաքներու մէջ, որպէս հոգեւոր հովիւ:

1974-ին նշանակուած է Եթովպիոյ հոգեւոր հովիւ:

1974-1975 թթ. նշանակուած է Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային վարժարանի տնօրէն:

1976-ին վերադառնալով Երուսաղէմ՝ ստանձնած է Ս. Աթոռոյս Թարգմանի պաշտօնը:

1978-ին նշանակուած է Յորդանանահայ գաղութի առաջնորդ եւ Պատրիարքական փոխանորդ:

1988-ի Նոյեմբեր 13-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, ձեռամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց հայրապետի ձեռնադրուած է եպիսկոպոս:

1990-ին ձեռամբ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի՝ ստացած է Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ:

1998-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի կողմէ արժանացած է Արքութեան պատուին:

Հանգուցեալ Վահան Սրբազան, առողջական խնդիրներու պատճառով տարիներ առաջ հրաժարած էր Յորդանանի Պատրիարքական փոխանորդի եւ առաջնորդի իր պաշտօնէն:

Վահան Արք. Թօփալեանի վախճանը մեծ կորուստ է Յորդանանահայոց եւ մանաւանդ Առաքելական մեր Ս. Աթոռի եւ անոր հաւատաւոր զաւակներու համար:

13 Յունուար, 2023-ին, Ամմանի Սբ. Թադէոս եկեղեցւոյ մէջ հանգստեան Ս. Պատարագ մատուց Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: «Ողջոյն»-էն առաջ դազաղը բեմ հանուեցաւ, ուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան՝ Գերշ. Տ. Միքայէլ Արք. Աջապահեան Սրբազան Հայրը կատարեց հանգուցեալ Տ. Վահան Արք. Թօփալեանի «Վերջին Օծումը», ապա Ամմանի Պատրիարքական փոխանորդ եւ առաջնորդ Հոգշ. Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան խօսեցաւ դամբանականը, դրուատելով քառասուն տարիներու եկեղեցասէր գործունէութիւնը հանգուցեալին, որմէ ետք նախ հոգեւորականներ եւ ապա ժողովուրդը մօտեցան աշը առնելու հանգուցեալին:

Յետ սուրբ եւ անմահ պատարագի, կազմուեցաւ թաղմանական թափօր՝ շարականներով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ առաջնորդելու հանգուցեալը իր յաւիտենական հանգիստին: Վահան Սրբազանի մարմինը ամփոփուեցաւ Սահահայի գերեզմանատան մէջ:

Իր մահով՝ Պատրիարքութիւնը կը կորսնցնէ իր պարտականութեանց գիտակից, նուիրեալ ու ծառայասէր եկեղեցականը: Բոլորով սրտիւ կ'աղօթենք հանգուցեալ Սրբազան Հօր հոգիին համար, թող Երկնաւոր Հայրը, իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր հոգին եւ իր երկնային մխիթարութիւնը պարգեւէ Միաբանութեանս անդամներուն եւ անոր անմիջական հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

